

Հարձակումները ՀՀ ԳԱԱ-ի և հայրենի պատմագիտության դեմ և հակազդեցության պակասը

1.



06.09.2001

ПЕРЛЫ СКВЕРНЫ

Открытое письмо редколлегии "Арменоведческого журнала АЙКАЗЯН" по поводу выхода в свет 20-го тома

Поздравляю вас с выходом в свет юбилейного номера и - с некоторым опозданием - с 30-летием вашего издания, состоявшегося в прошлом году.

Со дня основания целью журнала было, как свидетельствует его название, способствовать развитию арменоведения, развивать эту столь дорогую и важную для нас научную область посредством объединения усилий арменоведов Армении и диаспоры.

К сожалению, две рецензии, напечатанные в 20-м ежегоднике "АЖА", вызывают серьезные сомнения в верности сегодняшней редколлегии журнала этим целям.

Одна из статей написана заведующим кавказским отделом библиотеки американского Конгресса Левонем АВДОЯНОМ в связи с работой историка Армена АЙВАЗЯНА "Освещение истории Армении в американской историографии: критический обзор" (Ереван, 1998). Кстати говоря, эта работа, написанная с научных позиций и основанная на неопровержимых фактах, насколько мне известно, содержит наиболее полную и наиболее принципиальную оценку фальсификаторов армянской истории на Западе.

Чем же примечательна статья Левона Авдояна?

По мнению автора, НАН РА является "мертворожденной", а в области арменоведения в РА, как и в Азербайджане, процветает "буниатовская школа". Желательно, и это было бы правильно, чтобы на это обвинения ответили наши титулованные арменоведы. Увы...

Цель Авдояна - опорочить работу А. Айвазяна. Написанное им не рецензия, а сквернословие, не имеющее ничего общего с этикой интеллигентного человека. Интересно, что ученый, называющий свой "шедевр" рецензией, подвергает критике

научное исследование своего оппонента, не приводя ни единой цитаты. Более того, он уже в первом абзаце именует А. Айвазяна "интеллектуальным террористом".

Преодолевая соблазн нацепить Авдояну соответствующий ему ярлычок, хотела бы сказать: пусть таких "террористов", как А. Айвазян, будет побольше - при полном безразличии государственных и научных организаций, может быть, хоть они защитят наше национальное достоинство.

Для нас привычным было, когда в свое время армянские арменоведы давали достойный ответ турецко-азербайджанским фальсификаторам. К сожалению, теперь становится привычным для нас то печальное обстоятельство, что раздающиеся с Запада, в особенности - со стороны американской "арменоведческой" школы, дискредитирующие выпады остаются без ответа.

Пальма первенства здесь принадлежит самому славному нашему ученому за рубежом - иностранному члену НАН РА академику Ричарду Ованнисяну. Еще прежде Авдояна он обозвал "националистами" всех армянских историков, обладающих национальным менталитетом.

Не получив вовремя отпора, еще пышнее расцвела элита американских "арменоведов" - Рональд Сюни, Джеймс Рассел, Роберт Томсон, Роберт Хьюсн, Нина Гарсоян и др. Коллеги в Армении за малым исключением (академики Лендруш Хуршудян, Манвел Зулалян и др.), неизвестно почему, трепещут при одной мысли о критическом отношении к западному арменоведению. И солидарно, в братском согласии помалкивают...

В Армении известны одно-два из перечисленных мною имен - благодаря публикациям в прессе. Сюни, к примеру, имеет свое постоянное место на страницах наших газет. Он - профессор Чикагского университета с 1995 года, а до того почти десятилетие руководил кафедрой арменоведения Мичиганского университета. Сюни и сегодня "достойно" продолжает воспевать пораженческую политику Л. Тер-Петросяна - Ж. Липаритяна, организует армяно-турецкие "диалоги" и участвует в них, представляя позицию "армянской" стороны... А то, как иные американские круги защищают Айдат, мы недавно еще раз увидели на примере организации американских богачей, именуемой "Армянская Ассоциация Америки".

И вот честь защищать "арменоведческие" взгляды Сюни в юбилейном томе "АЖА" взял на себя член редколлегии журнала Ара САНДЖЯН, предприняв неудачную попытку "опровержения" неоспоримых аргументов А. Айвазяна. В своей монографии А. Айвазян, приводя параллельный текст английского оригинала, раскрыл суть книги Сюни "Глядя на Арарат. Армения в Новой истории (1997)" - со всеми ее "перлами". Приведем некоторые из них. Сюни отождествляет Восточную Анатолию с Армянским нагорьем, в Карабахском конфликте отстаивает турецко-азербайджанскую точку зрения. Еще позорнее его позиция в вопросе Геноцида - он не только затрудняется квалифицировать происшедшее, выбрать нужный термин - погромы или Геноцид, но и лишает проблему правовой основы и т. д.

Сколь странно, столь и удивительно: неужели в редколлегии "АЖА" не нашлось никого, кто объяснил бы г-ну Санджяну научную несостоятельность и национальную подлость хотя бы вот такого утверждения: "Из-за недоступности османских документов по сей день многие страницы обобщающей истории Геноцида армян (где и при каких условиях он был запланирован, какие именно цели преследовал и т. д.) остаются совсем темными, и перед любым историком

(армянским или иностранным) стоит профессиональная задача - проанализировать действительность на основе только имеющегося материала и логики. До какой степени преступны были те, кто запланировал и реализовал Геноцид, выяснится после появления всей истины в целом... Почему ученые обязаны выступать лишь в роли защитников так называемых справедливых прав нации и кому решать, что значит "права" и что значит "справедливый"? (стр. 476-477).

Если кто-либо мне докажет, что это не турецкая точка зрения, я принесу свои извинения.

А чем объясняет уважаемая редколлегия факт публикации на 198-й странице данного тома азербайджанской карты 2000 года, на которой Карабах указан в составе Азербайджана, нет освобожденных территорий и Лачинского коридора, а столица Карабаха обозначена как Ханкенди (удовольствуемся тем, что в скобках указан Степанакерт)? Все это повод к тяжелым и грустным размышлениям.

Хочу спросить редколлегию "АЖА": чьи интересы защищает это выходящее за рубежом маститое издание, публикуя подобные статьи и карты?

И при этом Санджян с оскорбленным видом пишет: "Айвазян призывает... не довольствоваться критикой лишь только турок и азеров, ибо не только они якобы (sic?!- А. Г.) целенаправленно бьют по интересам армянского народа и армянской государственности... Развернутая внутри американских центров "арменоведения" и сильно политизированная деятельность, согласно Айвазяну, с точки зрения "национальной" безопасности Армении (внутренней - гражданской и внешней - международной) гораздо вреднее по своим последствиям и опаснее, чем турецко-азербайджанские историко-научные фальсификации" (стр. 464).

Прежде чем взять под свою защиту книгу Сюни, Санджян сокрушенно сетует на то, что А. Айвазян высоко ставит источниковедческую ценность историй Мовсеса Хоренаци, Павстоса Бюзанда, Егише, Агатангелоса. Он возмущается тем, что А. Айвазян называет Сюни, Томсона и им подобных арменофобами.

А как иначе можно назвать историка, в частности Томсона (в настоящее время - заведующий кафедрой им. Г. Гюльбенкяна в Оксфордском университете), который, переводя на английский язык работы наших историографов V в., не только в своих предисловиях перемещает их в VIII-IX вв., называет их истории надуманными, вымышленными, ненаучными, но и, к примеру, именует Хоренаци "перворазрядным фокусником", "наглым и лживым фальсификатором"? Как же за этим мог не последовать беспристрастный комментарий А. Айвазяна: "... результат перевода (если не собственно цель) - не введение в широкий научный оборот богатого материала армянской историографии, но напротив - он изымается из серьезных научных исследований, навсегда объявляется ненадежным источником" (стр. 166).

На сей раз мишенью тандема Авдоян-Санджян стал Армен Айвазян. Следующим, наверно, будет доктор филологических наук Армен Петросян, опубликовавший в 3-м номере "Историко-филологического журнала" НАН РА за 2000 год ценное исследование "Арменоведческие" измышления Джеймса Рассела". Последний является одним из самых ярких представителей американской школы "арменоведения". Сей муж сменил Томсона на посту заведующего кафедрой арменоведения Гарвардского университета. В вышедшем в свет в США в 1997г. 2-томном учебнике "Армянский народ с Древнейшего до Нового времени" (редактор -

Р. Ованнисян) этот последний написал целую главу под названием "Формирование армянского народа".

Еще в 1991 году, когда Армен Петросян и заместитель директора Института археологии и этнографии НАН РА Григор Арешян были в Лос-Анджелесе, этот материал передали им, чтобы узнать их мнение. В дальнейшем с их мнением не посчитались. Этот текст изобилует не только "ложными научными идеями, но и потрясающими сведениями" (Армен Петросян). Приведем два примера: оказывается, против Бела воевал армянский бог Ваагн, крепость Эребуни построил Аргишти Второй. Кстати говоря, в НАН РА то ли не хотят, то ли избегают точной и ясной оценки этого "учебника"...

Нужно быть очень наивным, чтобы не видеть, что стоит за всем этим. Думаю, наши бейрутские соотечественники преследуют цель ВЫВЕСТИ центр арменоведения за пределы Армении. Иначе почему Санджян в качестве очередного обвинения подчеркнуто цитирует ту мысль А. Айвазяна, что Армения являлась и является центром арменоведения? Неужели это субъективное мнение одного только А. Айвазяна? Это действительно пока так. И наши вынужденные выступления в адрес отдельных зарубежных ученых обусловлены вовсе не тем, что мы хотели бы лишиться кого-либо права заниматься арменоведением: вся проблема в том, с каких позиций это делается.

Санджян, судя по всему, занят весьма неблагодарным и бесперспективным трудом, выполняя заказ сиюны, томсонов и стоящих за ними протурецких сил. Они пользуются тем, что сегодня Армения ослаблена, а руководство республики, к сожалению, не осознает, не придает важности, не понимает, что оно проигрывает, уступая арменоведению. Арменоведение для нас - задача стратегии и национальной безопасности, и последовательное ослабление его в Армении, мягко говоря, - предательство.

Это письмо я пишу с душевной болью и необъяснимой горечью. Моя цель не в том, чтобы умалить заслуги "АЖА", а, напротив, в том, чтобы подчеркнуть важность его исторической миссии. Мне хотелось бы впредь никогда не видеть в журнале материалов, наносящих вред нации.

Посредством родного радио, через передачи, адресованные зарубежному армянству, вместе со всем личным составом нашей редакции "Айреник - Спюрк" мы делали и будем делать все для укрепления связи нашей диаспоры с Родиной, для восстановления поколебленной веры в Родину у тех, кто покинул ее в последнее десятилетие из-за ситуации, возникшей в результате политической деятельности наших властей, для устранения заметной холодности к Армении - одним словом, для реализации заветных мечтаний всех армян.

С уважением -

Асмик ГУЛАКЯН,
редактор программы "Айреник - Спюрк" национального радио Армении

2.

Սույն հոդվածը կրճատումներով տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում (դեկտեմբերի 5, 2001)՝ «Պաշտպանենք հայագիտությունն այսօր» վերնագրով, իսկ ստորև ներկայացվող ամբողջական տեսքով հրապարակվել է «Վասն հայության» հանդեսում (#14, նոյեմբերի 27, 2001):

ՄԵՐ «ԱՆՎԱՆԻ» ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ

ԵՐԵՔ ԿՆԻԿ, ՄԻ ԴԵՐԵՆԻԿ...

ԿԱՍ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՇԻՐՄԱՔԱՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ»

Մի՛ վախեցեք

Ժանգոտ թասից ժանգ քերելուց.

Նա դրանից չի փչանա:

Մի՛ վախեցեք

Կեղծի մասին ճիշտ գրելուց.

Նա դրանից կքչանա:

Պարույր Սևակ

Հայաստանում հետևում են «խելագար և բացարձակ տգետ» պատմագիտական մեթոդների, ՀՀ ԳԱԱ-ն «մեռելածին» է, հայագիտության բնագավառում «ծաղկում է բունիաթովյան դպրոցը, ինչպես Ադրբեջանում»... Այս «գոհարների», ինչպես նաև Արմեն Այվազյանի «Հայոց պատմության լուսաբանումը ամերիկյան հայագիտության մեջ. քննական տեսություն» (Երևան, 1998թ.) աշխատությունը «գրախոսող» հեղինակներից մեկը ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանի Կովկասի բաժնի պատասխանատու Լևոն Ավդոյանն է («Հայկազյան հայագիտական հանդես», այսուհետ՝ «ՀՀՀ», Բեյրութ, 2000թ., էջ՝ 480-482):

Մյուս «գրախոսական» էլ գրել է խմբագրակազմի անդամ Արա Սանջյանը՝ փորձելով կասկածի տակ առնել Արմեն Այվազյանի մենագրության մեջ հրապարակված անվիճահարույց փաստերը («ՀՀՀ», 2000թ., էջ՝ 457-479): Տարեգրքի այս համարը տպագրել է նաև մեկ այլ ցնցող փաստափուլը. «Ադրբեջանն այսօր» երկլեզու քարտեզը (2000թ.), որտեղ Ղարաբաղը Ադրբեջանի կազմում է, մայրաքաղաքը՝ Խանքենդին, փակագծում՝ Ստեփանակերտ, նշված չեն ազատագրված տարածքները և Լաչինի միջանցքը (էջ՝ 198):

Վերոնշյալ հրապարակումների մասին, արդեն քանի ամիս, չէին արձագանքում ոչ Հայաստանում, ոչ սփյուռքում: Եղբայրաբար լռում էին... բոլորը: Ես ստիպված այս փաստերի մասին առաջին անգամ բարձրաձայն խոսեցի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, երբ հուլիսի 26-ին տեղի էր ունենում «ՀՀՀ»-ի հոբելյանական այս հատորի շնորհանդեսը (պատասխանատուները չէին բավարարվել հեռվից մեզ վրա ցեխ շալտելով ու մեր երեսին թքելով, հայրենիքում ցուցադրում էին իրենց

«նվաճումները»):

Ներկաներից միայն «Պատմա-բանասիրական հանդեսի» («ՊԲՀ») փոխխմբագիր, պատմական գիտությունների թեկնածու Պավել Չոբանյանն արժանապատիվ մտավորականի պես մոտեցավ ամբիոնին՝ բացատրելու համար, թե ինչ վտանգներով է հղի նման քարտեզի հրապարակումը: Այնտեղ նաև այլ պատմաբաններ կային, սակայն նրանց ներկայությունը չզգացվեց...

Ես ստիպված էի հայաստանցի պատմաբաններին կրկին հիշեցնել իրենց մասնագիտական և քաղաքացիական պարտականությունները՝ բաց նամակ հրապարակելով «Վասն հայության» (28.08.2001) և "Голос Армении", (6.09.2001) թերթերում:

Ըստ իս՝ Լ. Ավդոյանը ծանր մեղադրանքներ է հասցրել Հայաստանի ակադեմիական գիտությանը, մասնավորապես՝ հայագիտությանը: Իսկ Ա. Սանջյանը իր հուսահատ պաշտպանության տակ է առել ամերիկյան «հայագիտական» դպրոցի մի «կարկառուն ներկայացուցիչ»՝ ոչ անհայտ Ռոնալդ Մյունուն, որի «հայագիտական» հայացքները մինչև ուղն ու ծուծը բացահայտել, մերկացրել է Արմեն Այվազյանը՝ իր աշխատության մեջ: «Օսմանյան փաստաթուղթերու անհասանելիության հետևանքով,- գրում է Ա. Սանջյանը,- առ այսօր հայոց Եղեռնի համընդհանուր պատմության շատ երեսակներ (թե ան էրբ էլ ի՛նչ պայմաններու տակ ծրագրվեցավ եւ թե ճշգրիտ ի՛նչ նպատակ կհետապնդեր և այլն) տակավին մութ կմնան, և որևէ պատմաբանի (հայ կամ օտարագրի) մասնագիտական առաջադրանքն է իրականությունը վեր հանել՝ հենվելով առկա փաստական նյութի ու տրամաբանության վրա միայն: Թե՛ ո՛ր աստիճանի հանցավոր էին ցեղասպանությունը ծրագրողներն ու իրականացնողները, կպարզվի ամբողջական ճշմարտության երևան գալեն ետք... Ինչու՞ գիտնականները հանդես պետք է գան միայն ազգի այսպես կոչված արդար իրավունքներու պաշտպանի դերով, և ո՞վ պիտի որոշե, թե ի՛նչ բանը իրավունք է, և ի՛նչը արդար» (էջ՝ 476-477):

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի մի խումբ ընկերներ՝ պատմագիտության դոկտորներ՝ Էմմա Կոստանդյանը, Լիդա Գևորգյանը, թեկնածուներ՝ Գոհար Առաքելյանը և Դերենիկ Մուրադյանը, հոկտեմբերի 30-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում ինձ պատասխանեցին «Հայ պատմաբանների իրական խնդիրները» հոդվածով: Որ հոդվածի իրական հեղինակներն այն ստորագրած անձինք չեն, զգացվում է նյութի բովանդակությունից և շարադրանքից: Այնտեղ նույնիսկ ճշացող անիրագրելություն և հակասություններ կան:

Ելնելով խորագրի բովանդակությունից՝ կարելի էր ենթադրել, որ նրանք պետք է ի ցույց դնեին հայագիտության արդի փուլի խնդիրները և փորձեին առաջադրել լուծման ուղիներ: Դեղատոմս, այո, առաջարկում են. ձեռք բերել... հավկուրություն: Այսինքն՝ առանց պատճառը վերացնելու, առաջարկում են վերացնել հետևանքները՝ իրենք էլ չիմանալով, թե ո՞ւմ և ի՞նչ նպատակի են ծառայում (ասենք՝ շատ էլ լավ գիտեն): Դրանց մասին քիչ հետո՝ ըստ հերթականության:

Թվում էր՝ մեր պատմաբանները պետք է գոհ և շնորհակալ լինեին, որ լրագրողը քաղաքացիական զգոնություն է դրսևորել նաև իրենց փոխարեն:

Մակայն, ինչպես պարզվում է, ներքոստորագրողների խոռվքի պատճառն ամեննին էլ արևմտյան «հայագետների» կատարած ավերածությունները չեն: Քառյակը զայրացել և բավական անհաջող ընդվզել է իմ դեմ, որ համարձակվել եմ հիշատակել ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ռիչարդ Հովհաննիսյանի անունը, այսինքն՝ հանդգնել եմ ասել. «Արքան մերկ է»: Անդրադառնանք նրանց առավել «ծանրակշիռ փաստարկներին»:

1. Քառյակը գրում է, որ հայագիտության ոլորտում ստեղծված «անցանկալի վիճակն ավելի սրեց 1998թ. երիտասարդ շնորհալի պատմաբան Արմեն Այվազյանի հրատարակած «Հայաստանի պատմության հարցերի լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ» աշխատությունը: Գոնե ճիշտ արտագրեին մենագրության վերնագիրը...

Այստեղ միտումնավոր կերպով խառնված են պատճառն ու հետևանքը: Արմեն Այվազյանի գիրքը գրվել է ի հետևանք հայագիտական դպրոցում արդեն ստեղծված անառողջ մթնոլորտի և ի պատասխան ամերիկյան «հայագիտական» դպրոցի տված արտադրանքի, որտեղ իր «ծանրակշիռ» տեղն ունի Ռ. Հովհաննիսյանի խմբագրած, ամերիկյան հայագիտության «մեծ նվաճում» համարվող «Հայ ժողովրդի պատմությունը հնից մինչև նոր ժամանակները» (Լոս Անջելես, 1997թ.) երկհատոր դասագիրքը, որի վրա պրոֆեսորն իր 17 «քաջարի» հեղինակների հետ տքնել է շուրջ 20 տարի: Այս հեղինակները՝ Ռոնալդ Սյունի, Նինա Գարսոյան, Ռոբերտ Թոմսոն, Ջեյմս Ռասել, Ռոբերտ Հյուսըն և ուրիշներ հայտնի են իրենց հակահայկական տեսակետներով: Արդեն քանի տարի այս «գիտնականները» լծված են մի շատ կարևոր «գործի». ապացուցել, որ հայ ժողովուրդը Հայկական բարձրավանդակում եկվոր է, իսկ նրա պատմագրությունը՝ մտացածին, ոչ գիտական, այսինքն՝ այն չի կարելի օգտագործել որպես սկզբնաղբյուր: Խորենացին «առաջին կարգի աճպարար» է, «լկտի և կեղծարար խաբեբա», Եղիշեն՝ «ստախոս», Արցախը՝ Աղվանքի մաս, Հայկական լեռնաշխարհը՝ Արևելյան Անատոլիա և այլն, և այլն: Եվ մարդկանց աչքերին թոզ փչելով՝ անվերջ կազմակերպում են Հայաստանի մշակույթին նվիրված միջազգային գիտաժողովներ, ելույթներ ունենում, գեղեցկախոսում՝ մոռանալով խոստովանել, որ խոսքն այն ազգային մշակույթի մասին է, որի կրողներին հաջողությամբ նույն այդ հռետորները կտրում են հարազատ արմատներից: Կարծում եմ՝ սա նաև ազգային անվտանգության լուրջ խնդիր է, և համապատասխան կառույցները չպետք է աչք փակեն սրա առաջ («Հայոց աշխարհ», «Հայագիտությունը աշխարհաքաղաքական խաղերի որոգայթներում», 3. 11. 2001)...

Քառյակը հեզնանքով գրում է. «Պարզվում է, որ ըստ Արմեն Այվազյանի, Ռ. Հովհաննիսյանի «մեղքն» այն է, որ նա «հովանավորում» է «թուրքամետ» ու «հայատյաց» արևմտյան գիտնականներին, անձամբ խմբագրել և նրանց հետ հրատարակել է «Հայ ժողովրդի պատմությունը հնից մինչև նոր ժամանակները» անգլերեն «սխալաշատ» երկհատորյակը»:

Մասնագետների կարծիքով՝ այն լեփ-լեցուն է սխալներով, հաճախ՝ միտումնավոր, երբեմն՝ զավեշտալի: Եվ դա բացատրում են այն աննախանձելի «խիզախությամբ», որով 20-րդ դարի մասնագետն ստանձնել է խմբագրել կոլեկտիվ այնպիսի մի աշխատություն-դասագիրք, որի համար ինքը, ըստ գիտական չափորոշիչների, կոմպետենտ չէ: Բերենք ընդամենը երկու օրինակ: «Հայկական առաջին տպագիր գիրքը լույս է տեսել... 1660թ. Հոլանդիայում» (տես Ա. Ա.-ի նշվ. աշխ., էջ՝ 225): Բելի հակառակորդը ոչ թե Հայկն է, այլ՝ Վահագնը (Արմեն Պետրոսյան, «Ջ. Ռասելի «հայագիտական» հնարանքները», «ՊԲՀ», 2000թ., N-3, էջ՝ 243):

Քառյակը դիտավորյալ անտեսում է այս քննադատությունները և չի էլ փորձում բանավիճել կամ հերքել Արմեն Այվազյանի և Արմեն Պետրոսյանի առաջ քաշած դրույթներից գեթ մեկը: Մի թե սա է գիտական մոտեցումը: Հավանաբար, քառյակն այսպես է պատկերացնում իր իսկ առաջադրած «իրական խնդիրների» լուծումները: Այսպիսով՝ արտասահմանում հայկական դպրոցների և ընթերցողների լայն շրջանակների համար պատրաստված այս դասագրքի կոպիտ և միտումնավոր սխալները քառյակը դարձյալ լռության է մատնում: Այդ քննադատություններին չի անդրադառնում նաև Ռ. Հովհաննիսյանը, ըստ ներքոստորագրողների՝ այս «հանիրավի հերյուրանքներին պատասխանելու անհրաժեշտության» փոխարեն «մեծահոգաբար» նախընտրելով «արժանապատիվ» լռություն պահպանելը: Ավելին, այդ մասին նա լսել անգամ չի ուզում. «Ես խնդրած եմ 17 տարբեր հեղինակների, որոնք նշանավոր հեղինակներ են, տարիներով աշխատած են այս հարցերի շուրջ, որ ներկայացնեն իրենց տրված թեմաները» (տես Ռ. Հովհաննիսյանի հարցազրույցը «Իրավունքին», 1999թ., N-35):

Ռ. Հովհաննիսյանը միշտ և ամենուրեք բոլոր հնարավոր միջոցներով պաշտպանում է իր գործընկերներին: Բերենք մեկ օրինակ. «Վերջերս, օրինակ, այստեղ (ՀՀ-ում - Ղ.Գ.) գիրք մը հրատարակվեցավ, ուր կը քննադատվի արտասահմանյան հայագիտությունը: Ես չունեմ այդ գիրքը, գրախոսականը կարդացած եմ: Անհեթեթ բաներ գրված են, որ իբր արտասահմանյան հայագետները ինչ-որ թրքական ծրագիրներ առաջ կը տանեն: Ցնորամտություն է, քանի որ մենք 30-40 տարի է՝ կայայքարիւնք հայկական տեսակետներն առաջ տանելու համար» («Հայացք Երևանից», «Թշնամական դիրքեր բռնելով՝ ոչ մեկ բան չի փոխվի», 1999թ., թիվ 3, էջ 14):

2. Քառյակը գրում է. «Մեր պատմաբանների մի մասը, այդ թվում ազգային ակադեմիայի շատ գիտնականներ, որոնք հավանաբար չէին հասցրել ամբողջովին ընթերցել այս աշխատությունը, բավարարվեցին միայն հեղինակին գովաբանելով» (՝): Իսկ ամերիկյան «հայագիտական» դպրոցի մասին մամուլի համար իմ պատրաստած նյութերը, որոնք հիմնականում հարցազրույցներ են, անվանել են «անհիմն և փաստագուրկ»:

Նախ՝ ո՞վ է ձեզ իրավունք տվել նսեմացնելու ուրիշների գնահատականները, և երկրորդ՝ դա հարի՞ր է գիտնականի էթիկային... Երեք տարին չբավարարե՞ց մասնագետներիդ՝ այդ գրքի բովանդակությանը ծանոթանալու համար, մանավանդ, որ ձեր «կուռքերի» մասին է խոսքը... Թե՛ դուք միայն ձեր գրածներն եք կարդում...

Արմեն Այվազյանի մենագրությունը լույս է տեսել 1998 թվականին՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտխորհրդի միաձայն երաշխավորությամբ: Այս աշխատության մասին ծանրակշիռ հոդված է տպագրել ակադեմիկոս Մանվել Զուլայանը («ՊԲՀ», 1999, N-1, էջ 351-354): Ըստ նրա՝ «...սույն գիրքը կարելի է դասել գիտական սխրագործությունների շարքը: Հեղինակը, հիրավի, ցուցաբերել է քաղաքացիություն և հայրենասիրություն՝ փորձելով ակադեմիական ղեկավար շրջաններին հիշեցնել, որ ամերիկյան և ամերիկահայ որոշ հայտնի պատմաբանների նկատմամբ որդեգրած մոտեցումը գիտական ու քաղաքական առումով սխալ և վնասաբեր հետևանքների է հասցնում» (էջ՝ 354):

Հրապարակումներ են եղել նաև հանրապետական մամուլում: Գրքին, որպես կարևոր երևույթ, անդրադարձել են ռադիոյի տարբեր խմբագրություններ: Քառյակը հիշատակում է ռադիոհաղորդումներից մեկը, որտեղ ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանն այն անվանել է «գիտական սխրանք». «ԱՄՆ-ի հայագիտությունը թուրքական հայագիտության ազդեցության տակ է...

Հայաստանի հայագետները մեղադրվում են գավառականության և ազգայնականության մեջ: Այդ ոլորտում ընդգրկված են անգամ հայագի հայագետներ: Ստեղծված իրավիճակում Արմեն Այվազյանի ուսումնասիրությունը, իմ կարծիքով, կդառնա սկիզբ՝ հայագիտության իրավունքների համար մղվող պայքարում: Արևմտյան պատմագիտության հարձակման պայմաններում Հայաստանի պատմագիտությունը վարել է այդ վտանգավոր միտումները «չնկատելու» քաղաքականություն: Ներկա փուլում Հայաստանի հայագիտությունը պարտավոր է վարել հարձակողական և քաղաքականություն: Դրա հիմքը դրվում է սույն աշխատությամբ» (Ազգային ռադիո, «Հայաստանի ձայն» խմբ., «Ամերիկյան հայագիտություն» և, թե՛ հայատգիտություն», 28 մարտի, 1999թ.): Այս, ձայնագրությունը պահպանվել և հրատարակվել է («Եթեր», «Ամերիկյան «հայագիտության» նվաճումները», 2000թ., N- 42-44):

Նույն այդ ռադիոհաղորդման մեջ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանն ընդգծել է, որ ամերիկյան հայագիտությունն իրո՞ք չէր վել է իստորիզմից:

3. ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը «Իրավունք» շաբաթաթերթի ընթերցողի՝ «ի՞նչ կարծիք ունեք անձամբ Դուք և... ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը ... Արմեն Այվազյանի «Հայոց պատմության լուսաբանումը ամերիկյան հայագիտության մեջ. քննական տեսություն» գրքի վերաբերյալ» հարցին այսպես է պատասխանել. «Ես ծանոթ եմ այդ գրքին: Մեր գիտնականները լավ գնահատական են տալիս, համարում են, որ արտահայտված մտքերն առողջ են և հաջողված» («Իրավունք», «Եթե գիտնականը դպրոց չի ստեղծել...», 1999թ., N-93):

«Հայ պատմաբանների իրական խնդիրների» լուծումները որոնելիս՝ քառյակը միտումնավոր շեղվում է թեմայից և, ի պաշտպանություն Ռ. Հովհաննիսյանի, «հայտնաբերում» «մեղմացուցիչ դեպք հանցանագր»՝ մեջտեղ բերելով 1998թ. նոյեմբերի 18-ին Բերկլիի համալսարանում նրա ելույթի սղագրության պատմությունը, որի համար «Contemporary Caucasus Newsletter» («CCN») պարբերականի գլխավոր խմբագիր Էդվարդ Վոլքերն իբր «ոչ միայն հրատարակվել ներողություն է խնդրել պրն Հովհաննիսյանից, այլև դրանք ուղարկել է Հայաստան՝ համապատասխան գիտական հաստատություններին և Արմեն Այվազյանին»:

Իրականում «CCN» պարբերականի հաջորդ համարում (1999թ., ամառ, N-8, էջ՝ 12) է. Վոլքերը հրատարակել է Ռ. Հովհաննիսյանի նշած վրիպակների բոլոր ուղղումները: Ռ. Հովհաննիսյանը չի պահանջել հերքել իր հնչեցրած «հայ ազգայնամոլ պատմաբաններ» արտահայտությունը, որի համար նրան քննադատել էին Հայաստանում: Եվ նրա այն պնդումը, թե իբր ինքն ասել է «նացիոնալ» և ոչ թե՛ «նացիոնալիստ», նախատեսված էր միայն հայաստանյան լսարանի համար, իսկ ԱՄՆ-ում այդ հարցին չի էլ անդրադարձել՝ հայաստանցի պատմաբաններին ներկայացրած մեղադրանքը թողնելով ուժի մեջ: Մենք, փաստորեն, գործ ունենք երկակի ստանդարտի հետ: Իսկ այն, որ «ի դեպ» ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն Աշոտ Մելքոնյանը ներկա է եղել այդ դասախոսությանը և չի լսել «հայ ազգայնամոլ պատմաբաններ» արտահայտությունը, լուրջ չէ և փաստարկ ծառայել չի կարող, որովհետև՝ ա) Ա. Մելքոնյանն անգլերենին չի տիրապետում, բ) այդ արտահայտությունը հրատարակված է «CCN»-ում (1998-99թթ., ձմեռ, N-7, էջ՝ 18), իսկ Ռ. Հովհաննիսյանի ուղղումները «նացիոնալ»-«նացիոնալիստին» առհասարակ չեն առնչվում: Ահավասիկ Ռ. Հովհաննիսյանի ուղղումներն՝ անգլերեն բնագրով.

In the summary of the talk by Dr. Elkhan Nuriyev in the previous issue of this newsletter, the second sentence in the first full paragraph on page 23 should read, "Azerbaijan has aligned itself with the West, and its ability to survive as an independent state, and to build democratic institutions, will largely depend upon the presence of the West and American support."

There were also errors in the summary of the lecture by Professor Richard Hovannisian. Professor Hovannisian submitted the following corrections and clarifications:

"1. Professor Nina Garsoian has never stated that the Armenians were actually Iranians. She has argued, however, that the medieval Armenian and Iranian social structures mirrored one another in many ways and that, as the result of the adoption of Christianity in Armenia and the long struggle against Sasanid Iran, classical Armenian historians tended to obscure much of these common features. Garsoian also emphasized that Armenian society was based on the 'nakharar' system of semifeudal, rural organization rather than on an urban structure. Classical Armenian historians have themselves attested to the presence of significant non-Armenian elements in certain Armenian cities. The point I wished to make during my talk was that these issues of medieval Armenian history are in need of further investigation and elucidation, just as are questions related to the ethnogeneses of the Armenian people and other aspects of ancient Armenian history.

2. The massacres of Armenians in 1909 took place in 'Cilicia', not 'Silyassia.'

3. The Russian revolution and Kerensky government were in 1917, not 1918.

4. The dates in the sentence, 'There is also a lacuna in our knowledge of Soviet-Turkish relations from 1912 to 1918,' are in obvious error and should be read '1918 to 1921'."

The referenced articles, we would like to reiterate, were summaries of talks by Professor Hovannisian and Dr. Nuriyev, not verbatim transcripts. Neither were they reviewed in advance by the speakers. We regret any inconvenience the errors may have caused.

BPS Caucasus Newsletter/2

«Հայացք Երևանից» հանդեսը տպագրեց խմբագրի ներողությունը, ինչպես ենթադրվում էր, առանց վրիպակների (1999թ., թիվ 3, էջ 16): Իսկ թե ինչու «Իրավունքը» չտպագրեց է. Վոլքերի ուղարկած անձշտությունները, չեմ կարող ասել՝ չնայած «Իրավունքը», ի պատիվ իրեն, ի նքն է սկսել այս բանավեճը: Իսկ Ա. Մելքոնյանի պարագայում խմբագրությունը, հավանաբար, ավելի հեռատեսու ու շրջահայաց է եղել, հասկացել, որ երիտասարդ պատմաբանին ներքաշել են անագնիվ, ոչ մեկին պատիվ չբերող խաղի մեջ, որ ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի, կքանդի հարմարվող հայրենասերների ու կրավորակերպ չեզոքների լուսապսակները և չի տպագրել այդ հոդվածը՝ միայն ի շահ հեղինակի: Օգտվելով առիթից՝ ուզում եմ իմանալ՝ ինչպե՞ս է Ա. Մելքոնյանը մեկնաբանում այդ նույն դասախոսության ժամանակ Ռ. Հովհաննիսյանի արտահայտած մեկ այլ միտք. «Հայ ազգայնամոլ պատմաբանները... շատ են զայրանում ինձ պես մարդկանց վրա, ովքեր գրքեր են հրատարակում, ուր ասվում է, որ հայերը խառնուրդ են» ("CCN", 1998-99թթ., ձմեռ, N-7, էջ 18):

Բարեբախտաբար, թե դժբախտաբար՝ նաև մեզ է բախտ վիճակվել տեսնել՝ ինչպես են մեր ավագ սերնդի ներկայացուցիչներից ոմանք կարմրում

անցյալի իրենց գաղափարական ստրկամտության, քաղաքացիական տհասության և կենսագրական նմանատիպ «մանրամասներին» համար: Տեսնում ենք՝ ինչպես են ջանում խմբագրել, սրբագրել իրենց անցյալը հատկապես որոշ վայ-պատմաբաններ, ովքեր, պարզվում է՝ ժամանակին ավելի շատ վառարանի հումք էին արտադրում...

Հազիվ անցել են մեծ խմբաքանակներով «դոկտորներ» թողարկելու ժամանակները, հազիվ հնարավորություն է ստեղծվել հայագիտությունն ազատել օտար կապանքներից ու պարտադրանքներից, իսկ ոմանք, պնակալեզուության իներցիայով, շարունակ նոր տերեր ու կերակրամաններ են փնտրում: (Փակագծում հիշեցնենք՝ ինչպես էին աղմկում հայաստանցի շատ հայագետներ, երբ մի քանի տարի առաջ հանգուցյալ Լենդրուշ Խուրշուդյանը կարևորում էր Հայաստանում հայագիտական միջազգային կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը՝ հայագիտությունը գիտական խիստ վերահսկողության ոլորտում պահելու համար:)

4. Քառյակն ինձ մեղադրում է, որ ես, «մոռանալով» իմ «նամակ-հողվածի իրական նպատակը, կրկին անգամ... անհարկի» անվանարկել եմ Ռ.

Հովհաննիսյանին: Պատմաբաններիդ ամբողջ խմբին խորհուրդ եմ տալիս մեկ անգամ ևս ուշադիր կարդալ իմ բաց նամակը՝ համոզվելու համար, որ Ռ. Հովհաննիսյանի հասցեին ոչ մի նման արտահայտություն չկա: Իմ նպատակն ամենևին էլ դա չի եղել: Այդ մեղադրանքը ինձ ամբաստանողներիդ երևակայության արգասիքն է: Ի տարբերություն տիտղոսակիր պատմաբաններիդ՝ ես խոսում եմ փաստ-տեքստով և չեմ կարող իրերն իրենց անուններով չանվանել, ինչպիսի հնչողություն էլ այն ունենա:

Հողվածի կազմակերպիչներին, ինչպես արդեն ասացի, նյարդայնացրել, հունից հանել է Ռ. Հովհաննիսյանի անունը հոլովելը: Իսկ ինչո՞ւ են լռում, երբ պրոֆեսորը քննադատվում է մամուլի մյուս հրապարակումներում («Երկիր», «Մազոխիզմ», 15.10.1999թ.: "Голос Армении", "Диалог под звон турецких лир", 12.06.2001г.: «Ազգ», «Հոգեբույժ Վամրք Վոլքանը...», 19.07.2001: «Ազգ», «Հայաստանն իր դրացիների հետ...», 28.07.2001 և այլն):

Ամերիկյան «հայագիտությանը» մի շառաչուն ապտակ է հասցրել բանասիրական գիտությունների դոկտոր Արմեն Պետրոսյանը՝ մեր արդեն հիշատակած «Ջ. Ռասելի «հայագիտական» հնարանքները» ծավալուն վերլուծական հողվածում: Ռասելի այդ «գլուխգործոցը», որի «էջերն անհասկանալի և անիմաստ կերպով հեղեղված են հեղինակի կասկածելի մտքերով, ինքնահնար լեզենդներով, տեսությունների անլուրջ շարադրանքով, լեզվաբանական մարգանքներով և այլն» (տես նույն աշխ., էջ՝ 246), իր «պատվավոր» տեղն է գրավել Ռ. Հովհաննիսյանի խմբագրած հայտնի երկհատորյակում՝ հայ ժողովրդի ծագման վերաբերյալ բոլոր հակահայկական տեսակետներով հանդերձ: Հետաքրքիր է ինչո՞ւ է անտեսվում նաև Արմեն Պետրոսյանի ուսումնասիրությունը: Գուցե այն պատճառով, որ քննադատողները գիտաստիճանն է՞ր ունեն, իսկ ես՝ լրագրողս, այդ առումով շատ խոցելի եմ իրենց համար՝ որպես "самое слабое звено" («ամենաթույլ օղակ»)...

Ինչպե՞ս կբացատրի քառյակն ապագայում իր այս «քաղաքացիական խիզախությունը», իր խնդիրն է: Իրականում նրանք միայն այս չորսը չեն: Հողվածի հեղինակի անունը կհրապարակենք մի ավելի հարմար առիթով: Կասկած չկա՝ նա կրկին ցույց կտա իր «պայծառ» դեմքը. ինչպես երևում է ՀՀ ԳԱԱ սույն բարձրաստիճան այրը պարտավորված է ամերիկյան իր բարեկամների, գուցե և ամերիկյան ոչ գիտական կառույցների առջև: Ի՞նչ իմանաս... Ըստ մեզ հասած հավաստի տեղեկությունների՝ տեքստը վաղուց էր

պատրաստ, պարզապես ստորագրահավաքը դանդաղեց...

Սա մի անգրագետ ներկայացում է՝ նույնքան ապաշնորհ կատարումով:

Պարզապես ներքոստորագրող-կամակատարները երեք կնիկ, մի Դերենիկ, ստանձնել են էպիգոդիկ շատ տխուր դերեր՝ ըստ տրամաչափի: Ի՞նչ կա որ, նրանք էլ ա՛յս կերպ են պատկերացնում շուկայական հարաբերությունները պատմագիտության մեջ՝ շտապելով տեր կանգնել իրենց փայաբաժնին՝ մի գրիչ, մի գուգագուլպա... Նման ծառայության համար դժվար թե նրանց համար վիզա ուղարկեն օվկիանոսի այն կողմից: Թեև ո՞վ գիտե... Ի վերջո՝ պատվեր կատարողի համար գլխավորը հաճոյանալն է, իսկ թե ի՞նչ են վճարում և ինչի՞ դիմաց, այնքան էլ էական չէ նրանց համար: Վկան՝ մեր պատմությունը, որից դաս առնել չեն սիրում հատկապես պատմաբանները...

Հարգելի ներքոստորագրողներ (դատելով ձեր վարքագծից՝ դուք միշտ մնալու եք ներքո և ստորագրող), դո՛ւք տվեք ձեր այս քայլի բարոյական և

քաղաքացիական գնահատականը: Ժամանակն այն կտա: Վախենում եմ՝ ձեզանից ոմանք չհասցնեն «վայելել» փառքի դանիներն ու «հաղթանակի» բերկրանքը...

Իսկ այսօր անձնապես ինձ ոչ մի վիրավորանք չեք հասցրել: Լրագրողիս ակադեմիայում, հատկապես ձե՛ր ինստիտուտում, լավ են

ճանաչում: Իսկ ձեր թխած այդ ողորմելի պիտակները ձեզ համար արդե՛ն դարձրել եք... այցեքարտեր: Ինչևէ, գոնե կարողացա՞ք իրականացնել ձեր գերնպատակը՝ պաշտպանել Ռ. Հովհաննիսյանին՝ հանուն «առանց այն էլ պառակտված հայագիտական դպրոցի» միավորման, ինչպես փանջունիաբար գրում եք: Հայաստանում նրան «կուռք» եք դարձել՝ իբրև պատվանդան դեմ տալով ձեր անողնաշար մեջքը: Իսկ երբեք պատվանդանին կանգնելը չափազանց վտանգավոր է յուրաքանչյուրի համար... Ինչևէ, թող սա էլ ձեր հոբելյանական նվերը լինի պրոֆեսորի գործունեության 40-ամյակին:

5. Դուք միտումնավոր շրջանցում եք «ՀՀՀ»-ին հասագրած իմ

քննադատությունները, ոչ մի խոսք չեք ասում Ա. Սանջյանի թրքաշունչ «տեսակետների» մասին, որոնց հանգամանորեն անդրադարձել եմ իմ բաց

նամակում: Չեք էլ հիշատակում Ադրբեյջանի 2000թ. քարտեզը, որտեղ

Ղարաբաղը նույնիսկ ինքնավար մարզի կարգավիճակ չունի... Իսկ Լ.

Ավդոյանի գառանցանքներն ու զազրախոսությունը ՀՀ ԳԱԱ-ի և Արմեն

Այվազյանի աշխատության հասցեին պատմաբաններիդ համար «բացասական

գրախոսության» արժեք ունի: Ի՞նչ գրախոսության մասին կարող է խոսք

լինել, երբ Ավդոյանը ոչ մի մեջբերում չի կատարում Արմեն Այվազյանի

մենագրությունից: Ամերիկացի ձեր գործընկերը ծանր մեղադրանք է հասցրել

ՀՀ ԳԱԱ-ին: Սակայն, ինչպես երևում է, շատ տարօրինակ, անբացատրելի

սիրով, առանց որևէ վերապահության կամ վարանումի դուք ընդունեցիք նրա

«հաճոյախոսությունները»: Միայն ա՛յս կետում կարելի է պաշտպանել հիշյալ

պարոնի տեսակետը և ձեզ, բոլոր ձեզ նմաններին ու ձեզ «խաղի կանոններ»

թելադրողներին անվանել «մեռելաձիներ» և «բունիաթովյան դպրոցի

ներկայացուցիչներ»: Ես ձեզ շնորհավորում եմ՝ այդ պիտակը վայրկյան առաջ

գրպանելու համար: Իսկ այսօր շնորհակալություն՝ մեկ անգամ ևս ինձ

հրապարակավ ելույթի հնարավորություն ընձեռելու համար: Կարծում եմ՝

բերված փաստերը բավարար են, որպեսզի Արմեն Այվազյանի՝

հայագիտության մեջ հիրավի դարակազմիկ այս աշխատությանը դեռևս

անձանոթ ընթերցողը հասկանա, որ ա՛յս աշխատությանն է վերապահված հայ

պատմաբանների քաղաքացիական դիրքորոշումը ճշգրտող լակմուսի թղթի դերը...

Ցտեսություն:

ՀԱՍՄԻԿ ԳՈՒԼԱԿՅԱՆ